**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՍԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ/ՏԵՂԱԴՐՄԱՆ/ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՋՀ-ԳՀԱՇՁԲ-25/5**

ք. Ջերմուկ « 12 » նոյեմբերի 2025թ.

Ջերմուկի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Մանան Գևորգյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ-ն , ի դեմս տնօրեն Դավիթ Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ջերմուկ համայնքում տեսահսկման համակարգի կառուցման/տեղադրման/ աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-

ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **4740000 (չորս միլիոն յոթ հարյուր քառասուն հազար)** ՀՀ դրամ, որից **790000 (յոթ հարյուր իննսուն հազար)** ՀՀ դրամ :

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը

7.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.14 Պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Ջերմուկի համայնքապետարան | Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ |
| ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8 | ք. Երևան, Արշակունյաց 194/3 |
| Կենտրոնական գանձապետարան | «Ակբա-բանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900362000110 | Հ/Հ 22047-3330508000 |
| ՀՎՀՀ 08917563 | ՀՎՀՀ 02247256 |
| համայնքի ղեկավար՝ Մ.Գևորգյան | Տնօրեն Դ. Մկրտչյան |
| ------------------------------ (ստորագրություն) | ------------------------------ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*«12» նոյեմբերի 2025թ. կնքված*
*N ՋՀ-ԳՀԱՇՁԲ-25/5 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | կատարման | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 45231215 | Ջերմուկ համայնքում տեսահսկման համակարգի կառուցման/տեղադրման/ աշխատանքներ Տեխ.բնութագիրը՝ ստորև | դրամ | 4740000 | 4740000 | 1 | Ջերմուկ համայնք | Պայմանագիրը պատվիրատուի կողմից հաստատվելուն հաջորդող օրվանից մինչև 01.12.2025թ. |

**ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՍԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ**
**ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

Նախագծով նախատեսվում է Ջերմուկ համայնքում շուրջ 15 / տեղանքները համաձայնեցնելով պատվիրատուի հետ/ կետերում օպտիկական ցանցի կառուցում և տեսախցիկների տեղադրում:
Աշխատանքները կատարելու համար նախատեսվում է օգտագործել հետևյալ նյութերն ու սարքավորումները, ըստ նախատեսված տեխնիկական բնութագրերի՝

1. Օպտիկա-մանրաթելային մալուխ 4 կամ 8 ժիլ- OKT-8 կամ OKT- 4, (G.652.D)-T/ST 3kN
2. Ցանցային մալուխ - FTP CAT5E OUTDOOR CABLE WITH MESSENGER, 100% COPPER,24AWG, 0.5mm
3. Օպտիկական ամրակներ -AC kipyoj
4. Տեսախցիկի մոնտաժային տուփ
5. Միացման տուփ
6. Տեսաձայնագրիչ 8 տեսախցիկի համար / Պայմանական S1 /--
   a. Նկարագրություն

   8 պորտ տեսաձայնագրիչ
   > Տեսագրման ֆորմատը Smart H.265+/H.265/Smart H.264+/H.264/MJPEG
   > IP տեսախցիկների ապահովում 8 × 32MP
   > Մուտքային թողունակություն 384Mbps
   > Ինտերֆեյս USB , HDMI , VGA , RJ-45 , 10/100/1,000 Mbps , eSATA , RS-232/485
   > Կոշտ սկավառակի ապահովում 2 SATA մինչև 16TB ծավալ
   > Աշխատանքային ջերմաստիճանային պայմաններ -10°C to +55°C
7. Տեսաձայնագրիչ 16 տեսախցիկի համար /Պայմանական S2 /-
   a. Նկարագրություն
   16 պորտ տեսաձայնագրիչ
   > Տեսագրման ֆորմատը Smart H.265+/H.265/Smart H.264+/H.264/MJPEG
   IP տեսախցիկների ապահովում 16 × 32MP
   Մուտքային թողունակություն 384Mbps
   Ինտերֆեյս USB , HDMI , VGA , RJ-45 , 10/100/1,000 Mbps , eSATA , RS-232/485
   Կոշտ սկավառակի ապահովում 2 SATA մինչև 16TB ծավալ
   Աշխատանքային ջերմաստիճանային պայմաններ -10°C to +55°C
8. Տեսաձայնագրիչ 32 տեսախցիկի համար /Պայմանական S3/ -
   a. Նկարագրություն
   32 պորտ տեսաձայնագրիչ
   Տեսագրման ֆորմատը Smart H.265+/H.265/Smart H.264+/H.264/MJPEG
   Տեսախցիկների ապահովում 32 × 32MP
   Մուտքային թողունակություն 384Mbps
   Ինտերֆեյս USB , HDMI , VGA , RJ-45 , 10/100/1,000 Mbps , eSATA , RS-232/485
   Կոշտ սկավառակի ապահովում 2 SATA մինչև 16TB ծավալ
   Աշխատանքային ջերմաստիճանային պայմաններ -10°C to +55°
9. Տեսախցիկ դրսի 5 MP / Պայմանական Կ3 /
   a. Նկարագրություն
   i. 5MP IR Vari-focal Bullet WizSense արտաքին տեսախցիկ , 1/2.7" CMOS մատրիցա
   Առավելագույն կադրերի քանակ 5 MP (2960 x 1668) @20 fps, և աջակցում է 2688×1520 (2688 × 1520) @25/30 fps

Ներկառուցված միկրոֆոն
> Ներկառուցված IR LED, առավելագույն IR հեռավորությունը՝ 60 մ
Աջակցում է առավելագույնը 256 ԳԲ Micro SD քարտ
Պաշտպանություն IP67 , IK10
Սնուցում 12 VDC/PoE

10. Տեսախցիկ դրսի 6 MP / պայմանական Կ2 /

a. Նկարագրություն

i. 6MP 1/2.7" CMOS , Entry Smart Dual Light Fixed-focal Bullet Արտաքին տեսախցիկ
Առավելագույն կադրերի քանակ 6 MP (3200 × 1800) @20 fps, և աջակցում է 2688 × 1520@25/30 fps
Ֆիքսված օբյեկտիվ 3.6մմ
Գիշերային IR հեռավորություն մինչև 30մ
Ներկառուցված միկրոֆոն
12 VDC/PoE սնուցման աղբյուր
Մարդու հայտնաբերում
Պաշտպանություն IP67
Երաշխիք – 12 ամիս> IP67 , IK10 պաշտպանություն

Micro SD քարտի ապահովում (մինչև 256 GB)
Չափեր – 238.5 x 90.7 x 90.7 մմ
Քաշ – 0.72 կգ

11. Տեսախցիկ դրսի ANPR / S4 /

a. Նկարագրություն

1/1.8 CMOS, ավտոմատացված օբյեկտիվ
Անալիզը մինչև 60 մ, կանխորոշումը 20 մ
Արագությունը մինչև 120 կմ/ժ

12. Տես խցիկ դրսի 2 MP / պայմանական Կ3 /

Նկարագրություն
2MP արտաքին Fixed focal տեսախցիկ , 1/2.8" CMOS մատրիցա
Պատկերի որակ 2MP (1920*1080)@25/30 fps
ROI, SMART H.264 +/H.265+ կոդավորում
Ներկառուցված IR, հեռավորություն մինչև 30մ
DWDR, 3D NR, HLC, BLC
12V DC/POE սնուցում
IP67 պաշտպանություն
Երաշխիք 12 ամիս

Տեսահսկման համակարգի կառուցումը նախատեսումէ երկու հիմնական մասեր, այն է օպտիկա-մանրաթելային ցանցի կառուցում ըստ նախատեսված տեղերի և տեսանկարող սարքերի տեղադրում :
ՅԱՆՑԸ և Տեսահսկումը նախատեսվում է կառուցել և տեղադրել հետևալ վայրերում՝
ՑԱՆՑ ԵՎ ՏԵՍԱՀՍԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

1. Համայնքապետարան – Օպտիկան մալուխով ցանցի կառուցում / Կետ 1 /

1.1 Համայնքապետարան – Տեսաձայնագրիչ 32 պորտ- / S3 / - 1 հատ

1.2 – օպտիկայի խաչմերուկ / Կետ 1.2 /

1.2.1 Հեռավորությունը – 150 մ

1.2.2 Սյուների քանակը – 7

1.2.3 Համայնքապետարան : SFP սվիտչ 4 պորտ -1 հատ, ODF 4 պորտ – 1 հատ

1.2.4 Օպտիկայի խաչմերուկ – Տեսախցիկ / Կ2 / - 3 հատ

1.2.5 Արկղ – 1 հատ, PoE սվիտչ 4 պորտ 1 SFP-ով – 1 հատ, Մուֆտ – 1 հատ, ODF – 1 հոսանքի միացման պարագաներ

1.3 Օպտիկայի խաչմերուկ – Շահումյան փողոց սկիզբ / կետ 1.3 – պմ. մարտիկի խանութ/

1.3.1 Տեսախցիկ / Կ2 / - 2 հատ

1.3.2 Երկարությունը – 350 մ

1.3.3 Սյուների քանակ – 12 հատ

1.3.4 Կետ 3 : Արկղ -1 հատ, PoE սվիտչ 4 պորտ 1 SFP-ով – 1 հատ, , ODF – 1 հատ, Հոսանքի սնուցման մալուխ – 70 մ, հոսանքի միացման սարքեր

1.4 Օպտիկայի խաչմերուկ – Կենտրոն / կետ 1.4 – զովազդային հեռուստավահանակ /

1.4.1 Տեսախցիկ / Կ1 / - 1 հատ

1.4.2 Տեսախցիկ / Կ2 / - 2 հատ

1.4.3 Երկարությունը – 150 մ

1.4.4 Սյուների քանակ – 6 հատ

1.4.5 Արկղ – 1 հատ, PoE սվիտչ 8 պորտ 1 SFP-ով – 1 հատ, , ODF – 1 հատ, UTP մալուխ – 100 մ, միացման տուփ – 2 հատ

2 Կամրջի լուսակարգավորիչ և Շահումյան-Մելիք Աղամյան փողոցների խաչմերուկ

2.1 Կամուրջի լուսակարգավորիչ / Կետ 2.1 / – «Արարատ» Առողջարանի տանիք / Կետ 2.2 /

2.2 Օպ.մալուխի Երկարությունը – 200 մ

2.3 Տեսախցիկ / Կ2 / - 3 հատ

2.4 Սյուների քանակը – 5 հատ

2.5 Կետ 2.1 : ODF – 1 հատ , Արկղ -1 հատ, Սվիտչ 4 պորտ 2 SFP-ով, հոսանքի միացման պարագաներ

2.6 Կամուրջի լուսակարգավորիչ - Կետ 2.1 :

2.7 Արկղ - 1 հատ, PoE սվիտչ 4 պորտ 1 SFP-ով – 1 հատ, ODF – 1 հատ, մուֆտ – 1 հատ, հոսանքի միացման պարագաներ
2.8 Շահումյան և Մ.Աղամյան փողոցների հատման խաչմերուկ / Կետ 2.3 – Արմեղի խանութ /
2.8.1 Տեսախցիկ / Կ2 / - 3 հատ
2.8.2 Հեռավորությունը – 800 մ
2.8.3 Սյուների քանակը – 28 հատ
2.8.4 Արկղ – 1 հատ, PoE սվիտչ 4 պորտ1 SFP-ով, հոսանքի միացման պարագաներ
3 ՏՈՒՐԻԶՄԻ ԿԵՆՏՐՈՆ
3.1 Տեսախցիկ / Կ2 / - 4 հատ
3.2 Արկղ – 1 հատ /կառույցի ետնամասում ամրացվող/, ODF – 1 հատ, PoE սվիտչ 8 պորտ, SFP սվիտչ 4 պորտ, WiFi անտենա – ըմպելասրահին միանալու համար- 1 հատ, հոսանքի միացման պարագաներ
4 ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐԻ ԸՄՊԵԼԱՍՐԱՀ / կետ 3 /
4.1 Տեսախցիկ / Կ2 / - 3 հատ
4.2 Տեսախցիկ / Կ3 / - 3 հատ
4.3 Ցանցը կառուցվում է մոտակա փայտյա շինությունից /Քոթեջ // Կետ 3.1 / մինչև կետ 2 հողային անցումով, օպ. մալուխը առկա է, ընդամենը զոդում և 1 SFP
4.4 Կետ 3 : Արկղ – 1 հատ, PoE սվիտչ 8 պորտ 1 SFP-ով – 1 հատ, , ODF – 1 հատ, UTP մալուխ – 300 մ, միացման տուփեր, WiFi անտենա – տուրիզմի կենտրոնին կապ տալուլու համար- 1 հատ, Հոսանքի միացման պարագաներ
5 ՃՈՊԱՆՈՒՂՈՒ /– ՁԱԽԱՓՆՅԱԿԻ ԽԱՉՄԵՐՈՒԿ / կետ 5 /
5.1 Ցանցը կառուցվում է Ճոպանուղու տնօրենի գրասենյակից / Կետ 5.1 / մինչև ներքին հոսանքի ՏՊ վերջնամաս
5.2 Տեսախցիկ / Կ1 / - 1 հատ
5.3 Տեսախցիկ /Կ2 / - 2 հատ
5.3.1 Օպ. մալուխի երկարություն – 200 մ
5.3.2 UTP մալուխի երկարություն – 80 մ
5.3.3 Սյուների քանակը – 3, 4 հատ
5.4 Կետ 4.1 : Արկղ – 1 հատ, PoE սվիտչ 4 պորտ 1 SFP-ով – 1 հատ, , ODF – 1 հատ, Հոսանքի մալուխ 25 մ, հոսանքի միացման պարագաներ
5.5 Կետ 4 : Միացման տուփ

6 Ձախափնյակ 26բ տանիք / Բարձրահարկ / Կետ 6.1 - Ձախափնյակ 26բ Խաչմերուկ / Բարձրահարկի խաչմերուկ, հենասյուն / Կետ 6
6.1.1 Բարձրահարկի տանիք՝ Կետ 6.1 – Կետ 6 : UTP Մալուխի երկարություն – 60 մ
6.1.2 Սյուների քանակ – 1 հատ
6.1.3 AC – 2 հատ
6.1.4 Խաչմերուկի հենասյուն ՝ Կետ 6
6.1.5 Տեսախցիկ / Կ2 / - 3 հատ
6.1.6 - Արկղ - 1 հատ, PoE սվիտչ 4 պորտ – 1 հատ, հոսանքի միացման պարագաներ
7 Եկեղեցի ՝ Կետ 7 – Այստեղ նախատեսվում է լոկալ ցանց, որը ընդհանուր կետ 6 ցանցին կմիանա WiFi սարքով
7.1 Տեսախցիկ / Կ2 / - 1 հատ
7.2 Տեսախցիկ /Կ3 / - 3 հատ
7.3 UTP Մալուխ – 150 մ
7.4 PoE սվիտչ 4 պորտ, միացման տուփեր
8 Գ.Կեչուտ՝ Կետ 7
8.1 Ցանցը նախատեսվում է կառուցել – Գյուղապետարան / Կետ 7 / և գյուղի սկզբնամասի մուտքային ճանապարհին մոտիկ հենասյուն /Կետ 7.4 / կառուցվածքով: Ընդհանուր ցանցին կմիանա VPN – կապով:
8.2 Օպ. մալուխ երկարություն – 250 մ
8.3 Սյուների քանակ – 12 հատ
8.3.1 Կետ 7 – Սվիտչ 4 պորտ 1 SFP պորտ, ODF 4 պորտ
8.3.2 Խաչմերուկի հենասյուն /Կետ 7.4/ - Արկղ – 1 հատ, ODF – 1 հատ, PoE Սվիտչ 4 պորտ, 1 SFP, հոսանքի միացման պարագաներ
9 Բենզինի լցակայան / Կետ 8 / - եկեղեցեւ խաչմերուկ
9.1 Կետ 8.1՝ Բենզալցակայան
9.1.1 Կետ 8 – առկա տեսահսկման համակարգի միացում ընդհանուր ցանցին
9.1.2 UTP մալուխի անցկացում մինչև գովազդային վահանակ -Երկարությունը – 70 մ
9.1.3 Սյուների քանակ – 1
9.1.4 PoE սվիտչ 4 պորտ , WiFi ԱնտենԳյուղ
10 Գ.Գնդևազ՝ Կետ 9 – Ցանցի կառուցումը նախատեսվում է կատարել գյուղապետարանից 4 նախատեսված վայրերում /կնշվի պատվիրատուի կողմից / և հիմնական ճանապարհից գյուղ մտնող մուտքի մոտ
10.1 Օպտ.մալուխի երկարությունը – 1500 մ
10.2 Սյուների քանակը – 35 հատ
10.3 Մոնտաժային տուփ 5 հատ
10.4 Մալուխ ցանցային FTP – 150 մ
10.5 Մալուխ հոսանքի – 300 մ
10.6 ODF 8 պորտ- 1 հատ, ODF – 5 հատ, հոսանքի միացման պարագաներ – 5 տեղի համար
10.7 SFP Սվիտչ 8 պորտ, օպտ.մեդիա կոնվերտոր – 5 հատ, օպտ.մուֆտ – 3 հատ
10.8 Տեսաձայնագրիչ / S4 / - 1 հատ
10.9 Տեսացիկ / Կ2 / - 5 հատ
11 Եղնիկի արձանի շրջակայք
11.1 Տեսախցիկ / S2 / - 1 հատ
11.2 Միկրոչիպ 64 գբ

11.3 Մոնտաժայի տուփ, հոսանքի պարագաներ

12 Վերոնշյալ բոլոր սարքեր, սարքավորումները պետք է լինեն նոր, չօգտագործված։

13 Ցանցի կառուցումը պետք է կատարվի օպտիկական ցանցի կառուցման նորմերին և պայմաններին համապատասխան, ինչպես նաև պահպանվի հնարավորինս քաղաքին համապատասխան թույլատրելի անցումներն ու նորմերը։

14 Ցանցի/աշխատանքների/ երաշխիքային ժամկետը – 2 տարի/ որի մասով կատարողի կողմից պատվիրատուին պետք է տրամադրվի համապատասխան գրություն /

Տեսահսկման համակարգերի երաշխիքային ժամկետները – 1 տարի/որոնց մասով կատարողի կողմից պատվիրատուին պետք է տրամադրվի համապատասխան գրություն կամ կտրոններ/

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| Ջերմուկի համայնքապետարան | Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ |
| ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8 | ք. Երևան, Արշակունյաց 194/3 |
| Կենտրոնական գանձապետարան | «Ակբա-բանկ» ԲԲԸ |
| Հ/Հ 900362000110 | Հ/Հ 22047-3330508000 |
| ՀՎՀՀ 08917563 | ՀՎՀՀ 02247256 |
| համայնքի ղեկավար՝ Մ.Գևորգյան | Տնօրեն՝ Դ. Մկրտչյան |
| ------------------------------- | ------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 2*
*« 12 » նոյեմբերի 2025թ. կնքված*
*N ՋՀ-ԳՀԱՇՁԲ-25/5 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին` ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | Նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45231215 | Ջերմուկ համայնքում տեսահսկման համակարգի կառուցման/տեղադրման/ աշխատանքներ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | 4740000 | | 4740000 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Ջերմուկի համայնքապետարան
ք. Ջերմուկ, Մյասնիկյան 8
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900362000110
ՀՎՀՀ 08917563
համայնքի ղեկավար` Մ.Գևորգյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

Օազիս Կոմպյուտեր» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց 194/3
«Ակբա-բանկ» ԲԲԸ
Հ/Հ 22047-3330508000
ՀՎՀՀ 02247256
Տնօրեն` Դ. Մկրտչյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ